

ԱՒԵՏԱԲԵՐ



Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւններու

5 փետրուար 2017

ԺՁ. Տարի

Թիւ 7

ԱՌԱՋԱՒՈՐԻ ԲԱՐԵԿԵՆՂԱՆ



ԺԱՄԱՄՈՒՏ

Միածին Որդի եւ Աստուծոյ Խօսք, եւ անմահ՝ Եւրթիւն, որ յանձն առիր մարմնանալ սուրբ եւ միշտ կոյս Աստուածածինէն, անփոփոխելիդ՝ մարդ դառնալով խաչուեցար, Քրիստո՛ս Աստուած եւ մահովդ՝ մահը խորտակեցիր. մին անձերէն՝ Ամենասուրբ Երրորդութեան, արժանի փառքի՝ Յօր եւ Յոգւոյն հետ փրկե՛ մեզ:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԱՁ.

Փառքի թագաւոր Քրիստոսը, որ մեզի համար սուրբ Կոյսէն մարմնացաւ, խաչին վրայ համբերելով. միաբան երգով բարեբանենք:

Որ յանձն առաւ երեքօրեայ թաղումը, յարութիւն առաւ մեռելներէն իշխանութեամբ. միաբան երգով բարեբանենք:

Մեծ զօրութեամբ դժոխքի դռները՝ խորտակեց, իր եկեղեցին զգեստաւորեց մեծ վայելչութեամբ, միաբան երգով բարեբանենք:

ՄԵՍԵՐԻ (Սղմ. 64, 2 եւ 3)

Աստուած իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը պայելէ եւ Երուսաղէմի մէջ քեզի աղօթքներ թո՛ղ բարձրանան:

Աղօթքներս լսէ՛, եւ ամէն մարմնաւոր էակ՝ քեզի թո՛ղ գայ, քեզի թո՛ղ դիմէ:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ

ՊԱՅՔԱՐ՝ ՍՈՒՏ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՈՒՆ ԴԵՍ


Պօղոս Առաքեալին Տիմոթէոսին ուղղած Բ. Թուղթէն Է ընթերցուածը.
(2. Տիմ. 2, 15-26)

Ձանա՛ ինքզինքդ ընտիր ներկայացնել Աստուծոյ, իբրեւ մշակ՝ առանց ամօթի, հաւատարիմ տընտես՝ ճշմարտութեան խօսքերուն:

Չգուշացի՛ր սին եւ ամբարիշտ խօսակցութիւններէն: Անոնց հեղինակները միշտ յառաջադէմ են ամբարշտութեան մէջ եւ անոնց խօսքերը ավերներ կը սփռեն քաղցկեղի սման: Անոնցմէ են Փիլետոս եւ Յիմենոս, որոնք շեղեցան ճշմարտութենէն, պնդելով, թէ մեռելներու յարութիւնը արդէն իսկ կատարուած է եւ այսպէս շատերու հաւատքը կործանեցին:

Աստուծոյ դրած հաստատուն հիմերը սակայն, կը մնան անսասան՝ կնքուած այս խօսքերով. Տերը կը ճանչնայ իրենները եւ թող զգուշանայ անօրէնութենէ ով որ Տիրոջ անունը կը կանչէ:

Մեծ տան մէջ միայն ոսկեղէն եւ արծաթեղէն անօթներ չկան. այլ նաեւ փայտեղէն եւ կաւեղէն: Ոմանք սահմանուած են ազնի գործածութեան, ուրիշներ՝ հասարակ գործածութեան: Եթէ ուրեմն մէկը ինքզինք մաքրէ այս մեղքերէն, որոնց մասին խօսեցայ, պիտի ըլլայ ընտիր անօթ մը՝ սրբուած, Տիրոջ հաճելի եւ ատակ՝ ամէն տեսակ բարի գործի: Փախի՛ր երիտասարդական կիրքերէ: Զետամուտ եղի՛ր արդարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան, միացած անոնց, որոնք մաքուր սրտով Տիրոջ անունը կը կանչեն: Չգուշացի՛ր իօլ եւ յիմարական հարցե-



րե. գիտես, թէ անոնցմէ կը ծնին կռիւներով:

Իսկ Տիրոջ ծառան պէտք չէ կռուական ըլլայ, այլ՝ հեզաբարոյ բոլորին հանդէպ, կարող՝ ուսուցանելու եւ անխակալ: Զակառակողները պէտք է խրատէ հեզութեամբ, թերեւս Աստուած ապաշխարութիւն տայ անոնց՝ ճշմարտութիւնը ճանչնալու, ազատուելու սատանային որոգայթներէն, որ զանոնք գերի կը պահէ եւ հպատակ՝ իր կամքին:

Ալէլուիա, Ալէլուիա,

Դուն պիտի կանգնիս եւ գթաս Սիոնի, եկած է ժամը, ժամանակը հասած է որ գթաս անոր:

(Սղմ. 101, 14)

Ալէլուիա:

ԱՒԵՏԱՐԱՆ

ՅԻՍՈՒՍ ԿՐ ԶԱԼԵ ԾՈՎՈՒՆ ՎՐԱՅ (Յովհ. 6, 15-21)

Մեր Տէր Յիսուս Զրիստոս. իմանալով, թէ պիտի գան յափշտակէն զինք ու թագաւոր հռչակէն, դարձեալ առանձին լեռ քաշուեցաւ: Իրիկունը Յիսուսի աշակերտները ծովեզերք իջան, նաւակ ելան ու մեկնեցան միւս ափը՝ Կափառնաւում: Մութը կոխած էր արդէն, սակայն Յիսուս տակաւին չէր եկած: Հոգը սկսաւ ուժգին փչել եւ ծովը ալեկոծեցաւ: Մօտ քսանհինգ կամ երեսուն ասպարեզ թիավարած էին, երբ նշմարեցին, որ Յիսուս ծովուն վրայէն քալելով՝ նաւակին կը մօտենար: Աշակերտները զարհուրեցան, բայց Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ, մի՛ վախնաք»: Ուզեցին զինք նաւակ առնել, սակայն նաւակը իսկոյն հասաւ այն վայրը, ուր կ'երթային:



ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ

«Ես եմ, մի՛ վախնաք»

Աշակերտներուն վախը կը կայանար երկու կետերու մէջ: Նախ՝ անոնք երեկոյեան ժամերուն է որ նաւակ առնելով ուզեցին անցնիլ լիճին միւս կողմը, եւ երկրորդ՝ լիճը զօրաւոր հովին պատճառաւ կ'ալեկոծէր: Երեկոն, մութը ընդհանրապէս մարդս վախի կը մատնէ: Երբ լոյսին մէջ ըլլանք, ամէն բան յստակ կը տեսնենք, մեր կեանքը ապահով է, սակայն մութին՝ կրնանք իյնալ, կորսուիլ: Մութը կը ներկայացընէ նաեւ մեր հոգեւոր կեանքի անապահով վայրկեանները, զորս կ'ապրինք ամէն անգամ որ հեռանանք Զրիստոսէ, ամէն անգամ որ փորձենք մեր անձ-

նական կամքը կատարել անձնական հաճոյքներու ետեւէն վազելով: Իսկ լիճին փոթորկալի վիճակը խորհրդանշան է կեանքի դժուարութիւններուն եւ տառապանքներուն: Ջուրը կեանքի նշան է, սակայն երբ ալեկոծ վիճակի մէջ գտնուի՝ ան կը դառնայ սարսափի ու անկումի խորհրդանշան: Նման աշակերտներուն, մեզմէ իւրաքանչիւրն ալ յաճախ կ'ապրի նոյնանման վախի պահեր, ըլլայ հոգեւոր մթութիւնը, ըլլայ կեանքի դժուարութիւնները: Սակայն այս բոլորին դիմաց, Զրիստոս, ինչպէս անցեալին, այսօր եւս մեզի կ'ըսէ. «Ես եմ, մի՛ վախնաք», այսինքն՝

վատաիէ ինծի: Վախը կը կործանէ հոգեւոր կեանքս, գայն կը յանձնէ անորոշութեան, կը հեռացնէ զիս Քրիստոսէն, մանաւանդ երբ սկսիմ իրմէ վախնալ: Բայց վատահոլթիւնը կը շինէ զիս, կը սնուցանէ եւ կը զարգացնէ հոգեւոր ընթացքս: Վատահոլթիւն ունենալով Քրիստոսի հանդէպ՝ անպայման որ բոլոր հարցերս ու ցաւերս իրենց լուծումը պիտի գտնեն, կը նշանակէ թէ ինք պիտի մասնակցի իմ ցաւերուս եւ զիս պիտի հասցնէ ապահով նպատակի: Աւետարանին հատուածին ամբողջական հետեւեալը կը կարդանք. «Անոք (աշակերտները) կ'ուզէին զինք նաւակին մէջ առնել, բայց արդէն հասաւ այն տեղը, ուր կ'երթային»: Քրիստոս այս պարագային չի հանդարտեցներ լիճը, չի լռեցներ հովն ու փոթոռիկը, սակայն



կը հասցնէ զիրենք հոն ուր պիտի երթային: Ուստի, իւրաքանչիւր հաւատացեալ կանչուած է բացարձակ վատահոլթիւն ունելու Քրիստոսի հանդէպ, որովհետեւ ինք յաղթեց աշխարհին ու փրկեց մեզ մեղքի գերութենէն:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Կրէկորի Յակոբ Տարաքճեան՝ 5 Յունուար 2017 - Ս. Խաչ եկեղեցի
Թալիա Յակոբ Բարիքեան՝ 5 Յունուար 2017 - Ս. Խաչ եկեղեցի
Էմիլի Սեպուհ Պասթրմաճեան՝ 8 Յունուար 2017 - Ս. Խաչ եկեղեցի
Տեսիլ Սարգիս Սեօքիմեան՝ 8 Յունուար 2017 - Ս. Խաչ եկեղեցի
Աննա Լուիսա Աբրահամ Տիմիճեան՝ 19 Յունուար 2017 - Ս. Խաչ եկեղեցի

ՄԱՀԱԶԴ

Ժագ Վարդիվառ Քէշիշեան՝ 30 Դեկտեմբեր 2017 - Ս. Խաչ եկեղեցի
Ժալալ Ժոզէ՝ Աննուզի՝ 31 Դեկտեմբեր 2017 - Ս. Խաչ եկեղեցի
Համբարձում ճանսըզեան՝ 20 Յունուար 2017 - Ս. Խաչ եկեղեցի
Ժորժ Անթուան Պապիք՝ 20 Յունուար 2017 - Ս. Խաչ եկեղեցի



Հետեւեցէք

Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան

ԼՈՅՍ ԶՈՒԱՐԹ

պատկերասփիւռի յայտագրին

Ամէն Երկուշաբթի, երեկոյան ժամը 7:15-ին
Կրկնութիւնը
 Ուրբաթ կ.ե. 1:00 - 2:30
 Շաբաթ առաւօտեան 5:00 - 6:30



Նոր ալ Շաբթ
 կայանէն

NileSat
 11096 H

www.noursat.tv

Tel.: 01/ 570 559 - Fax: 01/ 570 558 e-mail: eparchy@armeniancatholic.org
www.armeniancatholic.org